


1038



E-15
-28
1899

1038
1038

1038

Бородинско-Голубинская
МАСТЕРСКАЯ
Б. С. ГОРЬ-АДОКЕЛЯНА
Балковская ул., 24/7

2001

2010

1.1.1901

45
4-28

150
144-ԱՀ.

Դ ար

Գ-Ր ԷԳՈՒԱՐԴ ԱԼԲԵՐՏ

ՊՐՈՖԵՍՍՈՆԱԼ ՎԻՃԱԿԱՑԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ.

✓ 9059

ՀՈԳԻՆ ԵՒ ՈՒՂԵՂԸ

(
688
881
1004)



ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

ԽՈՒՐՃԻԴ ՄՆԱՑԱԿԱՆ ԵԱՆԻ.



↔ № (127) ↔

ՄՈՍԿՈՒ.:

ՏՊԱՐԱՆ Ք. ԲԱՐԻ ՈՒԴՅԱՐԵԱՆ Ի.

1899.

*В. А.
Д*

ՀՈԳԻՆ ԵՒ ՈՒՂԵՂԸ

ԴԱՍՏԱԽՈՍՔԻ ԹԻՒ

Վիեննայի համալսարանի պրօֆեսոր Դ-ր Էդուարդ Ալբերտի.

ԹԱՐԳՄ. ԲԺՇ ՇԿ - ՈՒՍՏԱՌԴ.

ԱՐԴԱԿ ՄՆԱՑԱԿԱՆԵԱՆ

Дозволено цензурою. Тифлисъ, 26 Августа 1899 года.



29685-4-A

12927-58

Типография Х. Бархударяна, Мал. Златоустовский пер., д. Гиршъ.

Այսած դարում հոգու առօրեայ դարձած հարցը
հետաքրքրում էր հաւասարապէս թէ ֆիզիոգներին
(բնախօսներին) և պաթօլոգներին (ախտաբաններին),
թէ փիլիսոփաներին և բժիշկներին և զբաղեցնում էր
ուրիշ շատերին։ Այժմ այդ հարցը նոր շքանի մէջ
է մտնում։ Հէնց այդ պատճառով էլ տեղի կը լինի
մի փոքր կանգ առնել նրա պատմութեան վրայ,
որպէս զի կարողանանք լուսաբանել մեր այդ նիւթը
նրա աստիճանաբար զարգացման տեսակէտից և պար-
զել նրա այժմեան նշանակութիւնը։

Հին ժամանակներում բժիշկները և փիլիսոփաները
հոգու էութիւնն ու մարմնի հետ ունեցած նրա
յարաբերութիւնը զանազան կերպով էին պատկե-
րացնում։ Փոքր ի շատէ կատարեալ փիլիսոփայական
վարդապետութիւնը այդ մասին Արիստոտէլինն է։

Նա համարում է բանականութիւնը մարմնից բոլորովին անկախ մի գյուղիւն, որ ընդունակ է զործունէութիւն ունենալ առանց մարմնի զործարանների մասնակցութեան։ Այդ գյուղիւնը մտնում է մարմնի մէջ զրսից և, երբ վերջինս մեռնում է, նա նորից աղատում է։ Երեակայութիւնը, ցնորաբանութիւնը, կամաւոր շարժողութիւններ անելու ընդունակութիւնը և աճման կենսական ոյժը, ըստ Արիստոտելի, երկրարդ կարգի հոգիներ են, որոնք ընդունակ են զործելու միայն մարմնի հետ միասին և նրա հետ միասին կործանուելու։ Այդ հայեացքը մտաւ ամբողջապէս քրիստոնէական Աքօլաստիական վարդապետութեան մէջ։

Ինչ վերաբերում է հին յունաց բժշկականութեան, երկու հակառակ հայեացքներ ենք զտնում չիպափոկրատէսի զրուածքների մէջ։ «Սուրբ հիւանդութեան մասին» գրքի մէջ պարզապէս ասուած է, թէ ուղեղը մոքի, զգայարանքների և շարժողութիւնների բնակատեղին է։ Ուրիշ զրուածքների մէջ ընդհակառակը, այն միտքն է յայտնում, թէ ուղեղը միմիայն նշանակուած է մարմնից լորձանիւթ ծծելու և քթի ծակերով արտահանելու համար։ Երեսում է, որ այդ հայեացքը չորացրած գանդի ուսումնասիրութիւնիցն է ծագել, որովհետեւ չորացրած գանգի վրայ կարելի է տեսնել, որ ուղեղի փոսերը քթախորշեց բաժանող միջնապատը մազի պէս ծակեր ունի։ Այդ հանդամանքն է առաջացրել այն ենթադրութիւնը, թէ այդ Ճանապարհով ծծում է լորձանիւթը։ Այն ժամանակ գեռ յայտնի չէր, որ լորձանիւթը գյանում է քթախորշում, իսկ քթի միջնապատի վրայ

յիշած ծակերով հոտառութեան նեարզը իւր ծիւղերն է ատարածում։ Ալէքսանդրիայի ուսումնարանի հոչակաւոր բժիշկները ուսուցանում էին, թէ հոգու բնակատեղին փոքրիկ ուղեղն է, սակայն պարզ է, որ հողի ասելով՝ նրանք միմիայն զգայարանքները և կամաւոր շարժողութիւններ անելու ընդունակութիւնն էին հասկանում։ Իսկ աճման կենսական հոգու բնակատեղին նրանք ձգնում էին գտնել փորձնական շաւղով։ Կորնելիոս Յելզը պատմում է, թէ Ալէքսանդրիայում ձգում էին յանցաւորների փոքր և կտրում էին նրանց ստոծանին, որից յետոյ մարդիկ իսկցն զրկուում էին կեանքից։ Որովհեաւ Ալէքսանդրիայի բժիշկների աշխատութիւնները մեղ չեն հասել ուստի մեղ յայտնի չէ, արդեօք ուրիշ ի՞նչ տեսակ փորձեր էին անում նոքա մարդկանց վրայ։ Ստոծանին կտրելու փորձը—շատ տխուր երեցիթ է։ Այդ գէպքում մարդիկ մեռնում էին, որովհետեւ զրկուում էին շունչքաշելու հնարաւորութիւնից։ Աւելի մեծ հաւանականութեամբ սպանիացի տօրէադորները հոգու բնակատեղի կարող էին համարել մէջքի ուղեղի այն մասը, որ ներփակուած է պարանոցի ողների մէջ։

Նրանք խրում են դանակը ծանր վերաւորուած կենդանու վզի առաջին և երկրորդ ողների մէջը, որից յետոյ կենդանին իսկցն մեռնում է, ինչպէս կայծակի հարուածից։ Բայց որովհեաւ այստեղ խօսքը մարդու մասին է, նկատենք, որ մի և նոյնը կարող է պատահել և սրա հետ։ Վերոյիշեալ տեղի մնասուելը անմիջապէս մահ է պատճառում։ Եւ ես չեմ կարող չըլիշել մի նշանաւոր գէպք, որը տեղի է ունեցել Պլատոնի քաղաքում, ուր երկու մարդ զրկուել են կեանդապէս մասը, ուր երկու մարդ զրկուել են կեան-

քից մի և նոյն տեղը և մի և նոյն կերպով։ Մի մարդ,
կամենալով իւր գրացու որդուն ցցց տալ Պարիզ
քաղաքը, բարձրացրեց նրան՝ բռնելով զլսիցը։ Երբ
նա կամեցաւ նրան վայր գնել երեխան անշունչ ըն-
կաւ գետնին։ Երեխայի հայրը, զայրանալով դրացու-
վրայ, զանակով հարուածեց նրան և սա իսկցն և
եթ գետին զլորուեցաւ։

Մարմինի անդամահատութիւնը ցցց տուեց, որ
երեխային ամսւր սեղմելուց՝ նրա մէջքի ուղեղը ջախ-
ջախուած է եղել վզի ողների մէջ, իսկ մեծ մարդու-
մէջքի ուղեղն այդ մի և նոյն տեղեցը կտրուած է
եղել որովհետեւ դանակը խրուել է վզի առաջին և
երկրորդ ողների մէջ։

Սակայն, մեր կողմից մեծ անզգուշութիւն կը լե-
նէր, եթէ մենք այդ հիման վրայ պնդէինք, թէ հո-
գու բնակարանը դանւում է այն տեղում, որի վնաս-
ուելը մարդուս անմիջապէս մահ է պատճառում։
Ֆլուրանսը, որը գտաւ այդ տեղը, անուանեց նրան
«կեանքի հանգոյց»։ Հիրկէն յետոյ ապացուցեց, որ
նա ներկայացնում է նրբաթելերի երկար կապոց ու-
ղեղի գործ նիւթի եղջեւներով։ Սակայն դա հոգու
բնակատեղին չէ, այլ կենարոնն է այն նեարդերի,
որոնք կառավարում են շնչառութեան գործողու-
թիւններին։ Այդ տեղը հոգու բնակարան համարողը
վարւում է ճիշդ այնպէս, ինչպէս Ալէքսանդրիայի
բժիշկները, որոնք ստոծանին հոգու բնակատեղին էին
համարում միմիայն այն պատճառով, որ նրան կտրե-
լուց յետոյ կեանքը մահանում էր, հոգին աներեւու-
թանում։

Այդ ուղղութեամբ հետաղօտութիւնների առաջին
փորձերը գտնում ենք Պերգամի ամենահոչակաւոր
հետազօտողի՝ Կլաւդիոս Հալէնի զրուածքներում։
Հիպատիկրատէսից յետոյ նա ամենայայտնի բժիշկն էր
հին ժամանակներում։ Հալէնը սեղհական սիստեմ
ըստեղծեց հօգու առանձին առաքու մների վիրաբեր-
եալ այլ ուղղակի ընդունեց Արիստոտէլի հայեցք-
ները և առանց որ և է քննադատութեան անցաւ
նրա հաստատած ֆունկցիօնների բնակատեղիի հար-
ցին։ Հոգին ինքն ըստ ինքեան մի ամբողջ էու-
թիւն է, —ասում է նա, —ուրեմն, բնակութեան տեղ
պիտի ունենայ։ Ուրի մէջ չըկայ. եթէ սաքը կտրում
ենք, հոգին մնում է մարմին մէջ, բայց եթէ ուղեղն
ենք հեռացնում, հոգին էլ չէ մնում մարմին մէջ.
ուրեմն հոգին դառնասաւ է ուղեղի մէջ։ Ուրոշելով
հօգու բնակատեղին, նա կամեցաւ որոշել նոյնպէս
նրա առանձին ֆունկցիօնների տեղը, բայց այդ չըյա-
ջողուեց նրան։

Առաջին անգամ շատ պարզ և ճիշդ կերպով
հօգու առանձին ֆունկցիօնները ուղեղի մէջ դաստ-
ուլում է յայտնի ջղային հիւանդութիւնների բժիշկ
Պոսէլդոնիոսը, որը ապրում էր Քրիստոսից երկու
դար յետոյ։ «Եթէ հիւանդանում է ուղեղի առաջին
մասը, —ասում է նա, —իսանգարմանն է ենթարկւում
բացառապէս երեակայութիւնը. իսկ եթէ հիւանդա-
նում է ուղեղի միջին մասը, վնասուում է դասելու
ընդունակութիւնը և, վերջապէս, երբ հիւանդանում
է ուղեղի յետին մասը, խափանուում է յիշողու-
թիւնը, իսկ նրա հետ և հօգու բոլոր միւս յատ-
կութիւնները։» Ուրեմն, նա ընդունում է երեք տեսակ

Հոգեկան գործունէութիւններ և զասաւորում է այսպէս. գործունէութեան առաջին տեսակը ուղեղի առաջին մասում, երկրորդ տեսակը՝ միջին մասում և երրորդ տեսակը՝ յետին մասում: Այդ վարդապետութիւնը, իւր պարզութեան շնորհիւ, միջին դարերի ամբողջ ընթացքում պահպանեց իւր գոյութիւնը և նրան էին զիմում թէ ֆիզիօլոգիկը, թէ աստուածաբանները և թէ վիրաբոյժները:

Ինքն ըստ ինքեան պարզ է, որ XV և XVI դարերում, երբ եւրոպական մարդկութեան ամբողջ կեանքի մէջ տեղի ունեցան նշանաւոր փոփոխութիւններ, որոնցից նոր շրջան է սկսւում պատմութեան մէջ, հոգու հարցը նոյնպէս ննթարկուեց մշտկման՝ բոլորովին նոր տեսակէտից: Բնական, օրդանական զարդացումի աղօտ լուսով է շրջապատուած այն ամենը, ինչ որ հասել է մեղ կլասիքական հընութիւնից հոգու հարցին վիրաբերեալ: Սոկրատին յաջորդում է Պլատոնը, Պլատոնին — Արիստոտէլը. դա հնչում է այնպէս, ինչպէս զարնան հետեւում է ամառը, ամառից յետոյ գալիս է աշունը: Ընդհակառակը, նոր ժամանակների սկզբում ամեն ինչ տիեզերական յեղափոխութիւնների կրկնակի լուսով լուսաւորուած է հանդիսանում: Միջին դարերի ուղղութիւնները հնչեցին և անհետացան մի տեսակ խուարի մէջ: Համեմատաբար այնքան երկար ժամանակ չէ անցել և աշա մեր առաջ սքանչելի փառքով կանգնած են նոր ժամանակներ, նոր գիտնականներ: Այդ նոր ժամանակները, որոնց ընթացքում աշխարհիս նոր մասի զիւտն արուեց, որոնք բաց արեցին մարդկութեան աչքերը և մատնացոյց արեցին ամե-

նախոշոր մօլորութեան վրայ, այն է՝ թէ պայտա է գալիս ոչ թէ արեգակը, այլ երկիրը, այդ նոր ժամանակները հիմնական կերպով զբաղուեցին նաև հոգու հարցով: Ամենից առաջ այդ հարցը բարձրացրեց այժմեան փիլիսոփայութեան հայր—Ռէչնէ Դեկարտը: Մինչդեռ միջին դարերում դոգման էին ընդունում, Դեկարտը կասկածն է համարում գիտութեան աղջիւր: «Մենք մարդիկ ենք», ասում էին առաջ. իսկ Դեկարտը հարցնում է. «Ո՞վ է իմանում, իսկապէս մենք գոյութիւն ունենք, թէ ոչ»: Եւ ապա իւր հռչակաւոր պատասխանն է տալիս. «Ես մտածում եմ, ուրեմն և գոյութիւն ունիմ»: Ինչքան ինձ յայտնի է, ոչ ոք Ֆէկրբախից գեղեցիկ չէ բայցարում այդ առածի միտքը: Ֆէկրբախը ասում է. «Ես մտածում եմ, ուրեմն ես գոյութիւն ունիմ», այդ, ըստ Դեկարտի, ոչ այլ ինչ է, եթէ ոչ բանականութեան էութիւնը, բանականութեան գաղափարը և նրա որոշումը: Ես զանազանում եմ ինձ իմ մարմից—նիւթից և այդ պատճառով էլ ինձ ես զանազանում են ուրիշները: Այն, ինչ որ ինձ զանազանում է, այդ իմ զիտակցութիւնն է, իմ ինձ վրայ ունեցած վստահութիւնն է, այն անսահման վստահութիւնը, թէ ես իսկապէս ես եմ և ոչ ուրիշը, ոչ էլ իմ մարմինը»:

Ես, իմ հոգին, իմ բանականութիւնը—նիւթեղէն կամ մարմնաւոր չեն:

Կատարեալ կերպով համազուելով դրա մէջ, Դեկարտը հարցնում է, արդեօք, ինչպիսի՞ յարաբերութեան մէջ են զանվաւմ բանականութիւնը և բնութիւնը: Արդեօք, գոյութիւն ունի՞ նիւթը բանականութիւնից

զուրս, թէ ոչ: Որովհետեւ բանականութիւնը ինքն իրեն ձանաչեց, զգալով, որ ինքը տարբերում է նիւթից, իշարկէ, նիւթը նշյապէս գյութիւն ունի: Նա գյութիւն ունի որպէս բանականութեան կատարեալ հակապատկեր բան: Այդ հակագրութեան շնորհիւ, բանականութիւնը ձանաջում է ինքն իրեն: Բայց ի՞նչն է կազմում բնութեան տարբեր յատկանիշը: Բնութիւնը որոշում է նրանով, որ ունի չափ, որ բռնում է որոշ տարածութիւն: Բայց ի՞նչպէս են կապուած միմեանց հետ չափ չունեցող հոգին և չափ ունեցող մարմինը: Դեկարտը երեք տեսակ հիմնական հասկացողութիւններ է ընդունում: բանականութեան հասկացողութիւններ, մարմինի հասկացողութիւն և մարմինի ու բանականութեան փոխաղարձ կապակցութեան հասկացողութիւն: Վերջին հասկացողութիւնը շատ մուժ է բանականութեան համար, բայց շատ հասկանալի է զգացմունքների համար: Ուրեմն, ոչ մի կտակած չի կարող ծագիլ որ հոգին կապուած է մարմինի հետ, բոյց ի՞նչպէս: Շատ զարմանալի կերպով Դեկարտը դալիս է այն եղրակացութեան, թէ հոգու բնակատեղին—~~ուղղի~~ առաջանանան է: Այդ ուղեղի միակ անդյոդ գործարանն է, բոլոր միւս գործարանները զյուգ-զյուգ են և տեղաւորուած են մեկը այս, միւսը այն կողմում: Ուռուցքանման զեղձը անդյոդ լինելու պատճառով, կարծիս, ուղեղի կենտրոնը կազմելու համար է նշանակուած: Բայց ի՞նչպէս է զետեղում այդ տեղ հոգին, որը անմարմին է և տարածութիւն չունի: Անկասկածելի է, որ հոգու բնակատեղի կարող է լինել միայն մի կէտ, որը թէ և նշյապէս չափ չունի,

սակայն որոշում է տեղը: Այդպէս ուրեմն, ըստ Դեկարտի, հօգու բնակատեղին գանւում է ուսուցքանման զեղձի մի կէտի մէջ: Իսկ թէ ինչպէս է կառավարում անմարմին և չափ չունեցող հոգին տարածութիւն ունեցող մարմինը, այդ հարցը մնաց ապագայ հետազօտութիւնների համար: Դեկարտը և նրա աշակերտները հեռու չողնացին այն ենթադրութիւնից, թէ գյութիւնը ունի մի զերբնական, գիտնական տեսակէտից անբացատրելի, նախապէս որոշած ներդաշնակութիւն, մի տեսակ Աստուած, որը ամենակարող է և հնարաւոր է դարձնում հոգու ազդեցութիւնը մարմնի վրայ:

1876 թւին անդամահատ Զիմերինդը նուիրեց Կանտին իւր «Հոգու գործարանը» վելնազրով աշխատութիւնը, որի մէջ նա շօշափում էր նաև հոգու բնակատեղիի հարցը: Զիմերինդի կարծիքով, հիմնուելով անդամահատական—ֆիզիոլոգիական հետազոտութիւնների վրայ, պէտք է հոգու գործարանը համարել այն հեղանիւթը, որը գտնւում է ուղեղի խոռոչներում: Այդ միաբը կասկածելի թուաց կանալին, որովհետև նրա կարծիքով, ջուրը, որպէս հեղուկ, անկազմ տարր է, ուստի և չէ կարող հոգու գործարանը լինել: Բոլորովին ուրիշ կերպարանք կըստանայ այդ հարցը, եթէ ապացուցուի, որ ջուրը գորունակ կազմակերպութիւն է, որ շատ հնարաւոր է, նամանաւանդ, որ նա բաղկացած է ջրածնից և թթուածնից: Դառնալով հոգու բնակատեղիի հարցին, Կանտը ասում է, որ այդ հարցը միայն այնքան նշանակութիւն ունի, որքան հոգու որոշ բնակատեղին ուղեղի մէջ հասկանալի է դարձնում գիտակցու-

թեան միութիւնը։ Գիտակցութեան միութիւնը, այն ֆակտը, որ ես գիտակցում եմ ինձ, բացառապէս բանականութեան համար ունի իրական նշանակութիւն։ Եթէ իսկապէս հոգին մարմին մէջ որոշ բնակատեղի ունենար, նրան կարելի կը լինէր ըմբռնել զգացմունքներով։ Բացատրենք այդ օրինակով։ Ենթագրենք թէ մի սենեակի մէջ հաւաքուել են 10—15 մարդ վճռելու մի կարեռ հարց և ընդունելու այս կամ այն միաձայն վՃիռը։ Խօսակցութեան ժամանակ պարզում է, որ բոլորի յանկութիւններն ու հայեացքները մի և նշյան են, կամ ինչպէս ընդունուած է ասել բոլորն էլ մի կարծիքի են։ Բանականութեան համար այդ միաձայնութիւնը, հայեացքների այդ միութիւնը անկասկած գոյութիւն ունի։ Նա կը մնար իրեւ դատաւոր բանականութեան համար և այն ժամանակ, երբ ընդունուած վճռի հետեանքը վատ լինէր, երբ գործը յանցանքով վերջանար։ Սակայն որպիսի պարզամտութիւն կը լինէր մէկի կողմից հարցնել։ «Ո՞ւր է գաւազիրների միութիւնը։ Աւելի տարօրինակ կը լինէր, եթէ նա սկսէր որոնել սենեակի մէջ, սեղանի վրայ կամ այնտեղ գտնուող մարդկանց երեսների վրայ այն կէտը կամ այն տեղը, ուր, նրա կարծիքով, պիտի գտնուի այդ միութիւնը։ Ահա մի օրինակ ես. ենթալլենք թէ մէկն ասում է. «Ոյն ամենը, ինչ որ գոյութիւն ունի, պիտի մի որոշ տեղ գտնուի։ Որովհետեւ հոգին ևս գոյութիւն ունի, ուրեմն, նա բնակութեան որոշ աեղ պիտի ունենայ։» Ներկայ եղողներից մէկը պատասխանելու տեղ հարցնում է. «Ասացեք, ինզրեմ, տիեզերքի որ տեղումն է գտնելում ժամանակը. ես շատ կը ցան-

կանայի տեսնել այդ տեղը։» Այդպէս ուրեմն, հակասութիւնը հէնց իրեն հարցի մէջն է։ Հոգին ինքն իրեն զգում է իր ներքին զգացմունքով, իսկ մամինը ըմբռնում է ինքն իրեն իր արտաքին զգացմունքով։ Տարածութեան մէջ ինքն իրեն տեսնելու համար, հոգին պիտի իր միջեց դուրս գար, որը ինքն ըստ ինքեան անկարելի բան է։ Կանոր վերջացնում է. «Ոյն վՃիռը, որ մենք սպասում ենք մետափիզիկայից հոգու բնակատեղի մասին, անկարելի եղակացութիւնների է հասցնում մեզ և այդ հարցը լուծել կամեցողին կարող ենք ասել Տերենտիոսի հետ։ «Դու կամենում ես քո խելքի օգնութեամբ յի ճարանալ։» Փիզիօլոգը միայն այն ժամանակ բաւականութիւն կը ստանայ, երբ նրան յաջողուի գիտել, թէ ինչպէս զօրունակ էու թիւնը փոխում է իրականի։»

Մի խօսքի մէջ կանոր ամփոփում է հոգու բնակատեղի ամբողջ հարցը. այն է, թէ հոգու բնակատեղին ժառանի է, անյայտ է։

Երբ հարցը այդպիսի զգուշութեամբ ձեւակերպուեց, բնագիտաութեան մէջ սկսեցին ուսումնասիրել ուղեղի մասերի զանազան ֆունկցիօնները և առաքումները։ Պէտք էր ուսումնասիրել, արգեօք ուղեղի որ մասերի բնական կազմութիւնը և գործունէութիւնն են անհրաժեշտ, որպէս զի բնական կերպով կատարուին հոգեկան առաքումները։ Այդ հարցը վճռելու համար մեր գարում զիտաութիւնը զիմում է իւր ձեռքի տակ ունեցած բոլոր միջոցներին։ Որո՞նք են այդ միջոցները։

Այդ միջոցներն են ուղեղի անդամական ուսումնասիրութիւնը, կլինիկական և պաթմոլոգիկական զիտաութիւններն ու փորձը։ Անդամակատաւթիւնը

Հետևեալն է ասում. ուղեղը և նրա շարունակութիւնը, այսինքն, մէջքի ուղեղը, զգացմանքների և շարժման նեարդերի հաւաքակէտն է. իսկ աեսողութեան, լսողութեան և հոտառութեան նեարդերը դէպի ուղեղն են գնում: Զգայնական նեարդերը մասսամբ դէպի ուղեղն են գնում: մասսամբ էլ դէպի մէջքի ուղեղը և այնտեղից արդէն անյնում են զլիսի ուղեղը. նոյնպէս էլ վարւում են շարժիչ նեարդերը, սակայն սրանցից մի քանիսը դուրս են գալիս ուղղակի զլիսի ուղեղից:

Յաճախ հետևեալ համեմատութիւնն են անում: նեարդերը համեմատում են հեռազրաթելերի հետ, որոնք ուղեղը զործարանների հետ միացնելու նպատակին են ծառայում: Զգայնական նեարդերը — այդ ուղեղի և զգայարանների միջև եղած հեռազրաթելերն են: Լոյսի ձառագայթը իմ աչքի վրայ է ընկնում. տեսողութեան նեարդը աչքում ծագած զրդգումը տանում է դէպի ուղեղը և մարդը տեսնում է: Եթէ կտրենք տեսողութեան նեարդը, մարդը ոչինչ չի տեսնիլ մինչև անգամ եթէ լոյսը մեծ քանակութեամբ ընկնէր նրա աչքի վրայ: Նատ անգամ է պատահել որ գնտակը խրուել է երկու աչքերի մէջտեղը, բայց չէ վնասել ոչ աչքերին, և ոչ ուղեղին: Եթէ տեսողութեան նեարդերը վնասուած էին լինում, մարդը ընդմիշտ կորյնում էր իր տեսողութիւնը, չընայելով որ նրա աչքերը և ուղեղը անվնաս էին լինում:

Շարժիչ նեարդերը ուղեղից դէպի մկանունքներն են գնում: այդ ուղեղի և շարժման զործարանների մէջ եղած հեռազրաթելերն են: Շարժիչ դրվումը համա-

պատասխան նեարդի միջոցով տարածւում է մինչև մկանունքը, որը և կրծատուելով, շարժումն է առաջ բերում: Իսկ եթէ կարենք այդ նեարդը, այն ժամանակ համապատասխան մկանունքի միջոցով անկարելի կը լինի որ և է կամովի շարժումն առաջացնել:

Այն մարդկանց պատմութիւններից, որոնց շարժիչ նեարդերը ընդհատուած են, երեսում է, որ նրանք շատ կրցանկանային շարժումներ անել և այդ նպատակով էլ նրանք լարում են իրենց բոլոր շիմերը, բայց նրանց մկանունքները չեն շարժւում:

Սյժմա հարցնենք, ինչպէս են արդեօք վերաբերում նեարդերը ուղեղին:

Նեարդերը բաղկացած են շատ բարակ թելերից, որոնք, ինչպէս վերև ասուած է, հեռազրաթելերի պէս զործարաններից գնում են դէպի ուղեղը: Ի՞նչ է կատարւում ուղեղում այդ թելերի հետ: Այդ հարցի վճռելը անգամահատութեան համար ամենազժուարին խնդիրն է կազմում: Ուղեղը բաղկացած է սպիտակ ուղեղային նիւթից և գորշ ուղեղային կեղեկից. վերջինս երեսքի խաւն է կազմում, և ըշապատում է սպիտակ ուղեղային գոյացութիւնը ձիշդ այնպէս, ինչպէս կեղել ըշապատում է ծառին: Գորշ գոյացութիւնը միայն ուղեղի մակերեսոյթի վրայ չէ գտնուում, այլ նա նոյնպէս սպիտակ ուղեղային նիւթի մէջ որոշ տեղեր է հաւաքւում, որոնց գորշ կեղեկից զանազանելու համար «կենարոնական գորշ նիւթ» են կոչում:

Մանրադիտական հետազոտութիւնները ցցյ են տալիս, որ սպիտակ ուղեղային նիւթը ամբողջապէս բաղկացած է նեարդային թելեկներից, մինչդեռ գորշ

գոյացութիւնը կազմուած է բաղմակապ բջիջներից: Սպիտակ ուղեղային նիւթի թելերը մասամբ բաղկացած են զգայարանքներից այստեղ եկած նեարդային թելիկներից, մասամբ էլ ուղեղի զանազան մասերը միացնող թելիկներից: Ապացուցուած է նախ՝ որ նեարդային թելիկները կապակցում են նեարդային բջիջների հետ. երկրորդ՝ որ պատահում են կապեր, որոնց մեջ թելիկները ամենեին մուտք չեն գործում: Երրորդ՝ որ նեարդային թելիկները սատերով են միանում միմեանց հետ: Եթէ մեզ յաջողւումէ հետախուզել նեարդային թելիկը մինչև նրա բաղմակապ բջիջի հետ միանալը, դժանից երբէք չէ հետեւում, որ այստեղ հաղորդակցութիւնը ընդհատումէ. բաղմակապ բջիջների ոստերը կարող են զրդուումը անց-կացնող ձանապարհների դերը կատարել:

Ենթադրենք, թէ էլեքտրական հաղորդիչը մի շենութեան մեջն է մանում և այնտեղ բաժանեւում է մի շարք երկրորդական հաղորդիչների, որոնք առանձին - առանձին կացարաններ են գնում: Կանգ առնենք հետևեալ երկութի վրայ. որոշ նեարդերը ուղեղի մեջ են թափանցում, որտեղից այդ նեարդերը կազմող թելերը շարունակուում են մինչև սպիտակ ուղեղային նիւթը: Ահա նոքա թափանցեցին կենարոնական գորշ նիւթի բաղմակապ բջիջների մեջ և թւում է թէ այստեղ նոքա ընդհատում են, իսկ իրականապէս այստեղ միմեանց հետ հաղորդակցող և միմեանց վրայ կուտակուած բջիջներից գուրս են դալիս նոր թելեր և մանում են գորշ ուղեղային կեղեր: Դառնալով մեր օրինակին, մենք ունենք հետևեալ նմանութիւնը. շինութեան այն ծայրից, որ-

տեղ մտել է մեր հաղորդիչը և աւելի փոքր հաղորդիչների բաժանուել զուրս է գալիս կրկին նոր ընդհանուր հաղորդիչ:

1004
12927-18

'ի վերջոյ նկատենք, որ ուղեղի մեջ նեարդերի ձանապարհը երբէք ուղեղ չէ լինում, այլ համարեած թէ միշտ գալարուն է լինում, մինչև անգամ խիստ գալարուն: Նեարդերը ուղեղ ձանապարհով չեն ձգտում իրենց նպատակին և ամեն կերպ հիւսուում են միմեանց հետ. հենց այդ միակ պատճառով շատ դժուար, յաճախ էլ բոլորովին անկարելի է լինում հետախուզել նրանց ձանապարհը ուղեղի մեջ:

Դառնանք դարձեալ Դեկարտին և նրա այն ենթադրութեան թէ հոգին բնակւում է ուռուցքանաման գեղձի մի կէտի մեջ: Եթէ բոլոր նեարդային թելերը ուղղուեին զէտի ուռուցքանաման գեղձը, և աստիճանաբար բարակելով, վերջանային այնտեղ մի կէտում, մի բջիջում, այն ժամանակ նրա ենթադրութիւնը որոշ պաշտպանութիւն կ'ունենար անդամահատութեան կողմից, թէ ինդիրը առաջուայ պէս կըմնար մեզ համար գաղտնիք, որ սակայն մի հիմք ունի: Իրականապէս մենք բոլորովին հակառակն ենք տիսնում: Ուղեղ մտնող և ուղեղից գուրս ենող նեարդերը երբէք չեն հաւաքուում մի ընդհանուր կէտում գերա մի ընդհանուր շրջանում: աւելի շուտով հեկամ մի ընդհանուր կամ նեարդային թելերի մեծ մասը մտնում է գորշ ուղեղային կեղերի մեջ չընալով, որ նրանց ձանապարհը դալարուն է, և որ նոքա կազմում են շատ հիւսուածքներ և, կարծես թէ, վերջանում են կենարոնական գորշ նիւթի մեջ Այսպէս ուրիշն, անդամահատական հետազոտութիւն

ները ցոյց են տալիս, որ զգացողութիւնները առաջ-
նորդում են մինչև ուղեղի կեղեր և որ ուղեղի կե-
ղեղը ծագում էն շարժառիթները։ Ուրեմն, անդա-
մահատութիւնը ոչ մի ժամանակ չէ ասում, թէ
հողին գտնուում է մի կէտի մէջ, այլ ընդհակառակը
նա միշտ մատնացոյց է անում, որ հոգու բնակա-
տեղին որոշ տարածութիւն է բոնում, տարածում
է մեծ կիսազնտերի ամբողջ մակերևոյթի վրայ։
Մեր խօսքը այստեղ իհարկէ, հոգու աներեսոյթ բնա-
կատեղի մասին է։

Սակայն, այդ բոլոր զիւտերը բացառապէս վերա-
բերում են ուղեղի բաղադրիչ մասերի ձեւին, նրանց
կաղմութեանը, հետևապէս մի ինչ որ մեռած բանի.
իսկ որ և է գաղափար կազմել ուղեղի գործունէու-
թեան մասին կարելի է միայն կենդանի ուղեղի վրայ
զիտողութիւններ անելով։ Երկու տեսակ զիտողու-
թիւն կարելի է անել կենդանի ուղեղի վրայ։ Կա-
րելի է զիտողութիւններ անել հիւանդների վրայ,
մեծ խնամքով ուսումնասիրել և զրել ամեն տեսակ
հոգեկան խանդարմունքներն, իսկ մահից յետոյ զիակ-
նահատութիւնը ցոյց կըտայ, արդեօք ուղեղի որ մասի
հիւանդութիւնիցն է առաջ եկել նկատուած խան-
դարմունքը և հիւանդութիւն որ ձեն է եղել։ Կամ
կարելի է սիստեմատիքական զիտողութիւններ կա-
տարել կենդանիների վրայ, մերկացնել նրանց ուղեղը,
զրդուել նրան կամ կարել նրա որոշ մասերը և զի-
տել արդեօք այդ ինչ հետեանք է ունենում։

Փափկասիրա ընթերցողին հանդսաւայնելու համար,
շատապում եմ յայտնել որ սաղեղը էնո՞ն ըստ ինժետն-
անդացայ է։ Կարելի է նրան կտրել ու ծակոտել, և

կենդանին ցաւի նշոյլ անգամ չի արտայայտիլ։
Ուղեղը մերկացնում են, այսինքն գանգի մի մասը
հեռացնում են, ենթարկելով կենդանուն նարկով,
այնպէս որ ամբողջ փորձի ժամանակ նա ոչ մի
տանջանք չէ քաշում։

Շատ տարօրինակ է թւում, որ ուղեղը նեարդերի
միջոցով ամեն ինչ ըմբռնելով, ինքն ըստ ինքեան
անզգայ է մնում։ Եթէ մենք նեարդը կտրենք մինչեւ
նրա զլիի ուղեղի հետ միանալը և սկսենք սեղմել
նրան, ծակոտել կամ դաղել այն կտորը, որը չէ
միանում ուղեղի հետ, կրտեսնենք, որ փորձի են-
թարկուող կենդանին այդ ամենից ոչինչ չէ զուում։
Սակայն այն կտորը, որ միացած է ուղեղի հետ,
դժույյուն է։

Եթէ մենք այդ կէս նեարդից մի կտոր էլ կտրենք,
կրկին զզայուն կրլինի միայն այն մասը, որը հաղոր-
դակցում է ուղեղի հետ։ Դորանից երկում է, որ
զզայնութեան բնակատեղին ուղեղն է։ Բայց նշնպէս
ճիշդ է և այն, որ ուղեղը ինքն ըստ ինքեան ան-
զգայ է։ Այդ փաստը այնքան էլ տարօրինակ չի
թուալ եթէ մենք երկակայենք հետեալ դէպքը։
Ենթարենք, որ մի մարդու ուղեղը պատահմամբ
մերկացած է, և որ այդ մարդը քիչ առաջ ական-
ջացաւի պատճառով բոլորովին զրկուել է լսողու-
թիւնից։ Միթէ կարելի է ենթարպել որ այդ մարդը
կըլսի մեր ասածները, եթէ մենք խօսենք նրա հետ
ուղղակի գանգի ձեղքով։ Կամ աւելի պարզ է հե-
տևեալ օրինակը։ Կապենք մեր հիւանդի աչքերը և
փոփոխակի լուսաւորութեան ենթարկենք նրա սե-
նեակը։ Միթէ նա անմիջապէս կըզգայ ուղեղի միջո-

ցով լոյսը և խաւարը, թէե նրա ուղեղը գանդի
ձեղքով փոփոխակի լուսաւորութեան է ենթարկ-
ւում: Ինչպէս որ ուղեղը անմիջապէս չէ զգում լոյսը,
նշյնպէս նա չէ կարող դրալ և ցաւը: Ո-չէ ու-
ուժու-մ է հասցաւառէս նեարդերի միջոցն:

Արդ աեսնենք, ի՞նչ սովորեցրին մեղ կենդանի
ուղեղի վրայ արած զիտողութիւները: Թայտնի է,
որ երբ հիւանդանում է ուղեղի կեղեր, լինի այդ
առաջին կամ յետին, աջ կամ ձախ կողմի մասը—
հիւանդի զիտակցութիւնը միշտ խանգարւում է, նա
սկսում է զառանցել և կամ թէ բոլորովին զրկւում
է զիտակցութիւնից: Դիակնահատութիւնը ցցյ է
տալիս, որ ուղեղի խոր ընկած մասերը մնում են
առողջ, այդ պատճառով կարելի է ապացուցած հա-
մարել, որ հօգեկան խանգարմունքները առաջանում
են ուղեղի կեղերի հիւանդութիւնից: Ֆլուրանսը
կենդանիների վրայ կատարած փորձերով լիովին հաս-
տատեց այդ: Ֆլուրանսը հեռացնում էր թուշուների
և կաթնասուն կենդանիների ուղեղի մեծ կիսա-
զընտերը, այսինքն, ուղեղի կեղեր և նրա մէջ մտնող
բոլոր սպիտակ թելերը: Կենդանիները, որքան այդ
կարելի էր նկատել նրանց շարժումներից, զրկւում
էին մտածելու ընդունակութիւնից: Հաւերը, որոնք
կարողանում էին ոտքի վրայ կանգնել, շարժւում
էին միայն արտաքին հարուածից: Նրանք կուտ չէին
ուտում: Միայն օպերացիայից մի քանի օր յետոյ
հաւը սկսում էր կտցահարել յատակը, որի վրայ
ոչինչ չըկար և չանգուտել մարմարիոնի տախտակը:

Նա իւր կամքով չէ վեր թուշում յատակից, և եթէ
նրան ստիպում են որ և է բարձր տեղեց ցած թուչել
նա աղեղնաձե չէ թուշում, ինչպէս սովորաբար լի-
նում է այդ, այլ վայր է ընկնում հորիզոնաբար,
անձոռնի կերպով թափահարելով թեւերը: Շներից
նա չէ վախենում, իր համար քնելու տեղ չէ որո-
նում, գիշերում է այնտեղ, ուր նրան թողնում են:
Նա միայն այն դէպքում կարող է ապրել եթէ կե-
րակուրը ուղղակի նրա կտցի մէջ դնեն, որից յետոյ
նա մեքենայաբար կուլ է տալիս նրան: Եւ եթէ այդ
կերպով շարունակ կերակրուի, նա կարող է ապրել
մի քանի ամիսներ: Բայց երբ կենդանիների ուղեղի
կիսագնտերը հեռացնուում են շեր-շեր, մտածելու
ընդունակութիւնը անհետանում է +այլ առ +այլ
աստիճանաբար, մինչեւ որ չէ հասնում այն որոշ
սահմանին, որից յետոյ կենդանիները վերև նկարա-
գրած գրութեանն են ենթարկուում: Այդ դէպքում
բոլորովին նշանակութիւն չունի թէ ինչ ուղղու-
թեամբ են հեռացնուում ուղեղի մասերը, արդեօք
առջեից թէ յետեից, աջ կողմից թէ ձախ: Այդ
հիման վրայ ֆլուրանսը եկաւ այն եղակացութեան,
որ մտածելու ընդունակութեան բնակատեղին մեծ
կիսագնտերն են, և որ այդ ընդունակութիւնը այս-
տեղ մի կէտի մէջ չէ տեղաւորուած, այլ տարա-
ծուածէ մեծ կիսագնաերի ամբողջ մակերեսը վրայ:
Այդ հայեացքը, ինչպէս վերև տեսանք, կատարելա-
պէս հաստատում են անդամահատութիւնը և հոգե-
կան պաթօլոգիան: Այդպէս ուրեմն, ըստ ֆլուրանսի,
հոգու բնակատեղին ո-ուշունչ մէծ ինտենսիվն են:

Այդպիսով, հոգու բնակատեղի մասին երրորդ հիւալօթեղան ևս արտայայտուեց. Հալէնը ուղեղի խոշչեցն էր համարում հոգու բնակատեղին, Դեկարտը՝ ուսուցանան ժեղյը, վերջապէս Ֆլուրանսը՝ ուղեղի մէծ հետաքեցէքը: Բացի այդ, Ֆլուրանսը հետեւեալ հետաքրքիր դիտողութիւնն արեց. Եթէ հեռացնենք կենդանու ուղեղի մի կիսագունոր, զրանից բոլորովին չէ վնասւում նրա մտածելու ընդունակութիւնը, այլ միայն թուլանում է մարմի հակառակ կողմի մկանունքների գործունէութիւնը: Իսկ եթէ երկու կիսագնտերից էլ մինչև որոշ սահման շերտեր ենք վերցնում; այն ժամանակ նկատում ենք, որ կենդանու մտածելու ընդունակութիւնը քիչ խանդարուում է, սակայն այդ մի քանի օրից յետոյ անցնում է և կենդանին կրկին սկսում է իրեն պահել այնպէս, որ կարծես թէ օպերացիայի չէ ենթարկել: Այդ հիման վրայ Ֆլուրանսը այն եզրակացութիւնն է անում, թէ երբ հեռացնում է ուղեղի փոքր մասը, մնացած մասը իրեն վրայ է ընդունում ամբողջ ուղեղի բոլոր ֆունկցիոնների գերը: Մարդկանց վրայ կատարած բազմաթիւ փորձերը լիովին հաստատում են այդ միաբը: Պրդէն XVII դարուայ վիրաբուժական գրուածքների մէջ այնպիսի դէպքերի ենք հանդիպում, երբ գանգի վնասուելուց հիւանդը զբկուել է ուղեղի մասերից, որից սակայն նրա մտաւոր ընդունակութիւնները բոլորովին չեն վնասուել և նրա ֆիզիքական առաքումների մէջ ոչ մի խանգարմանք չէ նկատուել: Մեր ժամանակներում այդպիսի դէպքերը հաղուազիւտ չեն, այլ ընդհակառակը՝ շատ բազմաթիւ են և բոլորովին չեն հա-

կասում վերև ասածին, այն է թէ երբ հիւանդանում է ուղեղի կեղեր, մարդուս մտաւոր ընդունակութիւնները խանգարւում են, որովհետեւ մեքենայական վնասների ժամանակ փչանում է ուղեղի կեղերի մի մասը միայն, իսկ մնացած մասերը կատարելապէս առողջ են և մնում են այդ դրութեան մէջ, եթէ հիւանդը կարողանում է զիմանալ հիւանդութեան: Ուրեմն, մարդկանց վրայ արած զիտողութիւնները ցոյց են տալիս, որ ուղեղից մաս մաս զրկուելը ոչ մի էական հետեւանք չէ կարող հոգեկան գործունէութեան որ և է զիւրին նկատելի խանգարմունք պատճառել: Այդ փաստը Ֆլուրանսի թէօրիայի համար ծանրակշեռ ապացոյց էր: Մի դէպքում կործանման է ենթարկում ուղեղի ձակատի մասը, միւս դէպքում անդամ ենք, որ այստեղ կորսատի է մատնելու ուղեղի աջ կողմի բաժինը, իսկ այնտեղ ձախ կողմի բաժինը: Եթէ հոգու բնակատեղին լիներ ուղեղի այս կամ այն որոշ և սահմանափակ մասը, այն ժամանակ թէ առաջին և թէ երկրորդ դէպքումն էլ հոգու առաքումները պէտք էր լուրջ խանգարման ենթարկուելն: Որովհետեւ այդ ոչ մի անդամ չէ նկատուել, ուրեմն անհրաժեշտ է ենթարկել որ ուղեղի ամբողջ կեղեն է հոգու գործարանը: Դրա համաձայն ֆիզիոլոգ Ֆիկը հետեւեալ պատկերն է նկարում: Ուղեղի կեղեր նրա գործունէութեան ժամանակ կարելի է համեմատել ածուխների հետ, որոնք առկայութեան են աղօտ լոյսով: Եթէ փոքրիկ խողովակի միջոցով օդի բարակ հոսանքն ուղղենք այդ ածուխների կոյտերին, այն ժա-

մանակ օղի գործողութեան ենթարկած տեղը հրաշէի
կրդառնայ: Եթէ օղի հոսանքը միշտ նոր տեղերի
վրայ ուղղենք, կարող ենք ստիպել ամենափայլուն
կէտին փոփոխել իւր տեղը կշյաի մէջ: Ուղեղի կե-
ղեի հոգեկան գործունէութիւնը մինչեւ որոշ աստի-
ճան նման է այդ երևոյթին: Մեր զիտակցութեան
մէջ բոցավառում է այս կամ այն պատկերը, մեր
կամքը զիմում է այս կամ այն գործողութեանը,
որովհետեւ մի վայրկեանի մէջ մեր զիտակցութիւնը
ընդունակ է բոցավառուել միայն մի բանի համար:
Այդպիսով հալէնի կարծիքին՝ թէ հոգու բնակատեղին
ուղեղի խորշերն են և Դեկարտի հայեցողութեանը՝
թէ հոգին գտնուում է ուռուցքանման գեղձի մի
կէտի մէջ փոխարինեց այն ենթազրութիւնը, թէ
հոգին մարմնի մէջ անդադար իտի՞ւն-է ի-շ աւել:

Այդ հայեցքը աիլապետում էր մինչեւ 1870
թուականը: Այդ թուին լոյս տեսաւ ֆրիտ և չիտցիգ
հետազօտողների աշխատութիւնը, որի մէջ նոքա
ասում էին թէ նրանց յաջողուել է էլեքտրականու-
թեամբ ուղեղի մակերևոյթը գրգռելով որոշ մկա-
նունքների շարժում առաջ բերել:

Նոքա բաց էին անում շների ուղեղը և հեռաց-
նում ուղեղի հաստ թաղանթը, յետոյ մերկացրած
ուղեղին մօտեցնում էին փոքրիկ կոճակներ և մի
ընդհանուր յենարան ունեցող լսնոսկեայ թելեր, ո-
րոնց միջի տարածութիւնը երկու կամ երեք միլի-
մետր էր: Լսնոսկի թելերի մէջի էլեքտրական հոսանքը
այնքան նուազ էր, որ երբ կոճակները դնում էին
լեզուի վրայ և հոսանքը կողպում, հաղեւ նշմարելի
զդացումն էր ստացուում: Այդ կերպով իմացուեց, որ

ուղեղի մակարդի հասելը էր իրաւունքն է հակառակ
իւղի մասնաւունեւը և առշարունքը էր առա-
ջացնու-ճ: Ուղեղի որոշ մասի վրայ ուղեղի լով հոսանքը,
կարելի էր զգայուն գարձնել գրգռել ծոծրակի մկա-
նունքները: Ուղեղի միւս հարեւան մասը ներգործում
էր երեւի մկանունքների վրայ: Երրորդը՝ ազգում էր
առաջի որոշի մի քանի մկանունքների վրայ: Հորրորդը՝
առաջի ուրիշ միացած մկանունքների վրայ: Վերջա-
պէս, ուղեղի միւս մասերի միջոցով կարելի էր յեպեւ
ոտքի մկանունքները զրգուել:

Այդ փորձերի հրատարակելը մեծ ուշադրութեան
արժանացաւ երկու պատճառով: Նախ, այդ փորձերը
հերքում էին այն հին հոչչակաւոր ֆիզիօլոգների
բազմաթիւ փորձերով ապացուցած կարծիքը, թէ
ուղեղը չէ զրգուում: Այժմ ապացուցւում է, որ
ուղեղը անզգայ է, երբ նրան դադում և ծակոտում
են, սակայն զրգուում է միայն որոշ ոյժի էլեքտրա-
կանութիւնով: Սուած էլ էին զիմում էլեքտրակա-
նութեան, բայց այնպիսի ուժեղ հոսանք էին գործ
ածում, որ ջլատում, անզգայ էին գարձնում ուղեղը,
ինչպէս որ շատ ուժեղ լցու շլացնում է մարդու
տեսողութիւնը: Երկրորդ, յայտնուեց, որ ուղեղը
առանձին մասերը համանիշ չեն, որովհետեւ ուղեղի
մի քանի մասերից շարժում չէր առաջ գալիս, մինչ-
դեռ ուղեղի միւս մասերը միշտ մի և նշն շարժում-
ներն էին առաջացնում: Շատ հեռու կրգնայինք,
եթէ սկսէինք քննել այն բոլոր յանդիմանութիւննե-
րը, որոնք արուեցին ֆրիտչին և չիտցիքին և որոնց
վերջիններս փառաւոր կերպով հերքեցին: Այժմ ոչ
ոք չէ կասկածում, որ երկու հետազօտողները լիովին
ապացուցուած ձշմարտութիւն են գտել:

Այդ գիւտը մեծ իրարանցում ձգեց ֆիզիօլոգների, պաթօլոգների և կլինիկաների բժիշկների մէջ։ Ամենից առաջ այդ փորձերը կատարուեցին զանազան կենդանիների վրայ. փառաւորապէս հաստատուեց այն դիտողութիւնը, որ ուղեղի մէջ միշտ կայ մի որոշ բաժին, որը ընդունակ է էլեքտրական հոսանքը զգալու և մարմնի հակառակ կողմի մկանունքները զրգել շարժուելու։ Ճշմարիտ է, ուղեղի այդ զգայուն տեղերը զանազան կենդանիների համար մի և նոյն դրութիւնը չունին, որ բացատրում է նրանով, որ զանազան կենդանիների ուղեղը միատեսակ չէ կազմուած, սակայն ձիշտ է և այն, որ աւելի կատարուն կենդանիների ուղեղի կեղևի մէջ միշտ կայ մի որոշ շրջան, որի զրգուումը մկանունքների շարժումն է առաջացնում. այդ տեղերը ուղեղի մակերեսոյթի «շարժիչ կենտրոններ» են կոչում։ Շատ հետաքրքիր են ֆերիէյի մարդանման կապիկների վրայ կատարած փորձերը։ Այդպիսի մի փորձ կատարուել է նաև մարդու վրայ։ Մէկ անգամ թարտոլովին յաջողուեց էլեքտրական հոսանքով զրգուել մի կնոջ ուղեղի կեղևը, որովհետեւ օպերացիայի պատճառով հեռացրուած էր գանգի մեծ մասը, և այդ կերպով մարմնի հակառակ կողմի մկանունքների շարժումն առաջացնել։ Այդպէս, ուրեմն, մարդու համար ևս, զոնէ իշխական սեռի համար, կարելի է այդ վարդապետութիւնը կատարեալ ապացուցուած համարել։

Շուտ յափշտակուող մարդիկ սկսեցին գրել թէ ուղեղի մէջ արդէն գտնուած են կամակալ շարժումների կենտրոնները։ Այդ նախադասութիւնը մեծ նշանակութիւն ունի։ Առաջ մենք խօսում էինք շնչա-

ռութեան կենտրոնների մասին, որոնց կործանումը իսկոյն և եթ մահ է՝ պատճառում Բացի այդ, ուղեղի մէջ կան ուրիշ ևս լաւ յայտնի կենտրոններ. օրինակ, կայ բիբլ լայնացնող կենտրոն։ Բայց այդ բոլորը տկամայ շարժումների կենտրոններ են. և ահա յայտնուեց, որ կաճակալ շարժումների կենտրոններն են գոյնուեցան։ Ուրիշ խօսքերով, բացուեցին կայարաններ, որտեղից կարող է հեռագիրներ ուղարկել, որոնք ներգրածերի միջոցով կըհաննեն որոշ մկանունքներին։ Կարծես, կաճէի կաճական գոյնացանը գտնուեց։ Աւելի լըջամիտ մարդիկ այդ եզրակացութիւնը բոլորովին ապացուցուած չէին համարում։ Նախ և առաջ կարելի էր հետեւեալ յանդիմանութիւնն անել երբ մենք զրգուում ենք կենդանու ուղեղի կեղևը, զիտե՞նք արդեօք ինչ զգացումներ են ծագում կենդանու մէջ թէ ոչ կենդանին անկարող է պատմել մեզ իւր տպաւորութիւնները։ Երբ մենք կարում ենք նրա ուղեղը, նա իւրեն հանգիստ է պահում, բայց ո՛վ զիտէ, չէ զգում նա արդեօք էլեքտրական հոսանքի ոյժը։ Օրինակ, շատ հաւանական է, որ երբ զրգուում ենք կենդանու ուղեղի մի որոշ մասը, նրան թւում է թէ այրում ենք նրա սուքը, և նա ակամայ ծալում է նրան։ Ուրեմն, մենք իրաւունք չունենք զրանից եզրակացնել որ մենք անմիջապէս լայնացնուեմ նրա մկանունքները։

Այդ ահսակ ընդդիմախօսութիւններին պատասխանելու համար հիացիքը կտորում էր ուղեղի ոչու հանգը։ Եթէ այդ մասերը կառավարում լինէին մկանունքների շարժումները, ուրեմն, նրանց հեռացնելուց յետոյ համապատասխան մկանունքների մէջ

անկարելի պիտի լինէր որ և է կամակալ շարժումն առաջացնել: Իրականապէս, ուղեղի որոշ մասի հեռացումից յետոյ շարժման բնորոշ խանդարուելն էր նկատելի լինում: որը սակայն շուտով անցնում էր: Փորձերը կատարւում էին ճագարների վրայ: Այդ մի և նոյն փորձերը կապիկների վրայ կրկնելով, ֆերիէն նկատեց, որ ոչ թէ միայն կենդանու շարժումներն են խանդարւում, այլ նա ստանում է խական կանուած, քրոնիկական, անբուժելի կաթուած:

Այդ կերպով ապացուցուեց, որ ուղեղի կեղեկի համապատասխան մասերը անմիջապէս յարաբերութեան մէջ են գտնւում շարժման գործարանների հետ:

Երբ արդէն հաստատուեց, որ շարժումները որոշ տեղ են բռնում ուղեղի կեղեկի մէջ, շատ բնական էր հարցնել արդեօք երևակայութիւնն ու զգացողութիւնն չընին նոյնպէս որոշ տեղեր ուղեղի կեղեկի մէջ, այսինքն, չե՞նք ըմբռնում արդեօք տեսողութեան զգացումներն ուղեղի մի մասով, լսողութեանը — միւս, և ճաշակինը — երրորդ մասով: Հիտցիզի, ֆերիէի, Մունկի և Գոլցի փորձերից պէտք է եղակացնել, որ տեսողութեան զգացումներն ըմբռնում ենք ուղեղի յետեկի մասի որոշ տեղի միջոցով:

Գոլցը շան ուղեղի մի կողմից հեռացնում էր խելապատակի մէծ մասը, որից յետոյ հակառակ կողմի աչքն էր ցաւում: Յետոյ այդ շանը մօտեցնում էին տիկնիկը: Հէնց որ առողջ աչքը բաց էր մնում, շունը սաստիկ հաջելով նրա վրայ էր վազում, բայց հէնց որ առողջ աչքը փակում էին և նորից նրան տիկնիկը մօտեցնում, այն ժամանակ շունն էլ չէր

շարժւում: Նրան ցոյց էին տալիս բար և նա բթամիտ կերպով նայում էր նրա վրայ. իսկ երբ բաղին ստիպում էին ձիչ արձակել այն ժամանակ շունը հաջելով և սաստիկ գրգռուած՝ նրա վրայ էր յարձակում: Բայց այդ շունը կըր չէր. նա վազում էր սենեակի մէջ և ոչ մի բանի չէր զիազում, վազում էր բաղի յետեց և հետեւում էր, օրինակ, ձեռքի շարժումներին: Բայց երեկի նա չէր զգում այն ամենը, ինչ որ տեսնում էր վնասուած կողմի աչքով, կամ աւելի ձիշ՝ նա չէր ջոկում առարկաները:

Այդպիսի հետեանքներ ստացաւ և Մունկը Բերլինում նա կտրտում ու հեռացնում էր ուղեղի միայն յետեկի շեղբի որոշ մասը: Այդ Ճանապարհով աւելի ստոյգ կերպով որոշուեց տեսողութեան զգացումի բնակատեղն: Մունկը ապացուցեց նոյնպէս, որ եթէ կործանուի այդ բաժնի մէծ մասը, այն ժամանակ կարելի է բոլորովին զրկուել տեսողութիւնից: Ֆերիէն նոյնը ապացուցեց կապիկների վերաբերեալ: Երբ նա կապիկների ուղեղի յետին շեղբից ամբողջովին հեռացնում էր խելապատակը, նոքա բոլորովին զրկում էին տեսողութիւնից: Նրանց նայուածքը ապուշ էր, նրանք չէին շարժւում, զիազում էին ամեն առարկայի, երբ նրանց ման էին ածում, ոչնչ և ոչքի չէին ճանաչում: Մենք այդ փաստերը բերինք միմիայն օրինակի համար: Ներկայում բազմաթիւ հետազոտողներ զբաղուած են ուղեղի մանրամասն ուսումնասիրութեամբ, հոգու բոլոր առաքումները խելապատակի զանազան մասերում սահմանաւեղելու նպատակով: Միւս կողմից կլինիկաների բժիշկները ճգնում են հոգեպէս հիւանդների վրայ

արած բազմակողմանի դիտողութիւններով և կտրած գիտակների մանրամասն ուսումնասիրութեամբ պարզել այդ մի և նոյն բանը մարդկանց վերաբերմամբ:

Մինչև այժմ բայլը դէպութիւնները օրյօն են առաջնորդութեամբ առաջնորդութեամբ առաջնորդութեամբ առաջնորդութեամբ առաջնորդութեամբ առաջնորդութեամբ:

Մենք այստեղ չենք կարող մանրամասնութիւնների մէջ մտնել: Բաւական է մի օրինակ ցցց տալու, թէ ի՞նչ են սովորեցնում մեզ մարդու վրայ արած դիտողութիւնները:

Մարդը միայն նրանով չէ զանազաննուում կենդանիներից, որ խօսելու ընդունակութիւն ունի, որովհետեւ կինդանիները նոյնպէս ունին լեզու, թէև նա շատ թերի է, բայց այնուամենայնիւ, մարդու լեզուն, համեամտած կենդանիների լեզուի հետ, անկասկած, մէջ առաւելունիւն է կազմում:

Նշանաւոր է այն, որ հէնց ուղեղի այդ ամենաբարձր ֆունկցիօնը առաջինը առիթ տուեց կիլնիկանիների բժիշկներին ենթադրել որ հոգեկան ֆունկցիօնների տեղը որոշուած է ուղեղի կեղեկի մէջ: Դեռ մինչև 1870 թւականը, այսինքն, մինչև չիտցիզի և մրիտչի փորձերի հրատարակելը, կիլնիկանիների բժիշկներին յայտնի էր, որ խօսելու ընդունակութիւնը կորցրած մարդկանց գիտակը կտրաելուց յետոյ միշտ մի որոշ տեղի, այն է՝ մեծ կիսագնաերի ճակատի մասի՝ հիւանդ լինելն էր նկատում: Այդ գիտեին գեռ Բուլիոն և Դակար: Սակայն միայն Փարիզի պրօֆեսոր Բրոկան կարողացաւ ապացուցել, որ խօսելու ընդունակութեան խանգարուիլը, որը յայտնի է առաջնորդութեամբ առաջնորդութեամբ առաջնորդութեամբ:

Հայութի յէպեակ հասկ հիւանդութիւնիցն է առաջ գալիս:

«Ա.Գաղիայի» նշանաւոր դէպքեր են լինում: Պատահում է, որ հիւանդը հասկանում է ամեն բան և մտածում է առողջ մարզու պէս, բայց կարողանում է արտասանել միայն այն խօսքերը, որը տպած կամ գրած է տեսնում: Օրինակ, նա արտասանում է «Հայ» խօսքը, որը մենք գրում ենք զրատախտակի վրայ, բայց իսկցն և եթ մոռանում է: Միւսները յատուկ և հասարակ գոյական անունների սկզբնատառերն են մոռանում, վերջապէս լինում են այնպիսիները, որոնք խօսքերի ամբողջ պաշարից պահպանում են միայն մի քանիսը:

Հոգու աւելի ցածր ֆունկցիօնների վերաբերմամբ մարդու ուղեղը կատարեալ համանման է աւելի կատարուն կազմուած կենդանիների ուղեղին: Եթէ ուղեղի կեղեկի մի որ և է մասը վնասուում է, անմիջապէս մարմնի հակառակ կողմի որոշ մկանունքների անդամալուծութիւնն է առաջ գալիս:

Աւելորդ է ասել թէ որքան մեծ գործնական նշանակութիւն ունի այդ գիւտք: Վիրահատութիւնը, նպաստելով այդ գիւտքի հաստատութեանը, ծառայեցնում է նրան իւր նպատակների համար: Շատ անգամ է հնարաւոր եղել առաջացած խանգարմանեքի, օրինակ, կաթուածի վրայ որոշել թէ ուղեղի որ մասն է վնասուել և միջոցներ ձեռք առնել վնասի առաջը կտրելու համար:

Սնկասկած, հոգեկան ֆունկցիօնները որոշ աւելի ունին ուղեղի մէջ: Գլխի ուղեղը գործարանների մի ամբողջ սիստեմ է, որոնց նորմալ դրութեան հետ

կապուած են զգայնական տպաւորութիւններն ու
շարժումները:

Եթէ տասը տարի սրանից առաջ սկսած գործը
առաջ ընթանայ անարգել պէտք է սպասել որ
կըգայ ժամանակ, երբ ուղեղի պատկերը աշխարհա-
գրական +արդէղի կրնմանի: Ուղեղի կեղեր շրջան-
ների և նահանգների կըլինի բաժանուած, որոնցից
իւրաքանչիւրը իւր յատուկ անունը կ'ունենայ. օրի-
նակ, «բազուկի մլանունքների շրջան», «աչքի մլա-
նունքների շրջան» և այն: Բացի այդ, ինչպէս աշ-
խարհագրական քարտէղի վրայ իւրաքանչիւր շրջա-
նում նշանակուած են քաղաքներ, գիւղեր և այլ
նշանաւոր տեղեր, նոյնպէս և ուղեղի կեղեի զանա-
զան շրջաններում կըլինին աւելի ճշգրիտ տեղեկու-
թիւններ, օրինակ. «քաղցրութիւնը և դառնութիւ-
նը ըմբռնող կէտ», «վերևի կոպի մլանունքների
կենտրոնը կազմող կէտ» և այն: Որքան է հեռու
այդ ժամանակը, նախատեսնել չէ կարելի, բայց շատ
հաւանական է, որ ուղեղի մակերեսյթի անդամահա-
տական քարտէղը գեռ երկար ժամանակ Ա.Ֆրիկայի
աշխարհագրական քարտէղին կրնմանի և ինչպէս
այնտեղ քարտէղի մէջ տեղը սպիտակ է մնում, այս-
տեղ ևս երկար ժամանակ դեռ սպիտակ կէտեր կըլի-
նին քարտէղի ծայրերում կամ միջում:

Սակայն կարող է պատահել, որ, սպասածի հա-
կառակ, կարձ ժամանակամիջոցում ուղեղի ամբողջ
մակերեսյթը կ'ուսումնասիրուի և զրական հետեանք-
ներ կրտայ: Այն ժամանակ ուղեղի մակերեսյթի պատ-
կերը աւելի եւրոպայի քարտէղին կրնմանի, ուր
իւրաքանչիւր կէտ իւր անունն ունի: Ենթաղբենք,
իւրաքանչիւր կէտ իւր անունն ունի: Ենթաղբենք,

թէ այդ կըլինի հազար կամ տասը հազար տարուց
յետոյ. այն ժամանակ, ուրեմն, կարելի կըլինի դիմել
ֆիզիօգին և խնդրել նրան, որ ուղեղի նախակա-
ղապարի կամ քարտէղի վրայ ցոյց տայ հոգու նուա-
կունեան առեղը: Բոլոր վերև ասածից յետոյ մենք
արդէն նախագուշակում ենք, թէ ինչ պատասխան
կըտայ ֆիզիօգիքը. նա կ'ասէ. «Ինչպէս եւրոպայի
քարտէղի վրայ «եւրոպական քաղաքակրթութեան
բնակատեղի» անունը կրող շրջան չըկայ, նոյնպէս և
ուղեղի քարտէղի վրայ չըկայ այնպիսի մի տեղ որի
վերաբերեալ կարողանայինք ասել. ահա՝ հոգու նուա-
կատեղն: Ինչպէս եւրոպական քաղաքակրթութիւնը
կայ ամեն տեղ, ուր որ մարդիկ նրա օրէնքների հա-
մաձայն են վարուում, նոյնպէս և հոգու նուակատեղն
այնտեղ է, ուր որ ժադուած է գիտակցութիւնը. իսկ
թէ ինչպէս է այդ կատարուում: Ֆիզիօգիփիան դրա
մասին ոչինչ չէ ասում:

Ազատութիւն տանք մեր երեակայութեան և տես-
նենք, արդեօք ի՞նչ զրութեան մէջ կըլինի մեղ հե-
տաքրքրող պրօբլէման հազար կամ տասը հազար
տարուց յետոյ: Մինչև այդ ժամանակ արդէն առան-
ձին գործիք հնարած կըլինին, որը կենդանի գանգը
իւր միջի ուղեղով թափանցիկ կըդարձնէ և որը
«էնկեֆալոսկոպ»—գլխաղիտակ—անունը կ'ունենայ:
Նրա միջոցով կարելի կըլինի պատի վրայ վերաստեղ-
ծել զանգի բովանդակութիւնը և այդպիսով բոլոր
ներկայ եղողները հնար կ'ունենան տեսնել այն ա-
մենը, ինչ որ կատարուում է ուղեղի միջ: Եւ ահա
մենք նախեցնում ենք երեխային և սկսում ենք մեր
դիմուղութիւնները: Մենք նրան կապոյտ գնտակ ենք

ցոյց տալիս և իսկոյն նկատում ենք, որ յետեի ուղեղի շեղը մէջ այնտեղ որտեղ տեսողութեան զգացումների կենտրոնն է գտնւում, արիւնաբեր երակները լայնանում և լայն շերտերի ձեւ են ընդունում, իսկ երակների մէջ ներփակուած արեան մարմնիկները յապաղեցնում են իրենց շարժումը: Բազմակապ բջեցները ներս են քաշում իրենց ոստերը և նրանց կազմող փոքրիկ մասնիկները սկսում են երերուն շարժումներ կատարել: Մենք երեխային ստիպում ենք մի ոտանաւոր արտասանել, իսկ հասարակութեանը կանխապէս խնդրում ենք ուշադրութիւն դարձնել ճակատի ուղղված նաև հողմ եւստաց դալարութիւն: Հայոց չէնց որ երեխան պատրաստում է արասանել այդ տեղում աննկարագրելի իրարանցումն է սկսում: մասնիկները (մօլեկուլները) վեր են ցատկուում, ոմանք ձուաձեւ, ոմանք հասարակ շըջանակներ են նկարագրում և այլն: Բայց ահա երեխան մի տեղ կմլրմում է, նա ամօթից կարմրում ու յուղւում է, իսկ մօլեկուլները խառնաշփոթ կերպով այս ու այն կողմ են սլանում... Ես էլ չեմ շարունակում այդ պատերի նկարագրութիւնը, միայն հետեւել հարցն եմ առաջարկում. արդեօք այդ ամենի մէջ երեսում է հոգին:

Մենք տեսանք միայն ուղղված ուղեղի բաղադրիչ մասերի շարժումները, ձևերը և գոյները: Գուցէ այդ ճանապարհով մենք կարողանայինք գուշակել զիտողութիւնների առարկայ դարձող մարդու մաքերը, բայց սակայն, ժիրակացնեան որոշեաներէն էր իսկ մենք երբէք չենք կարող ըմբռնել մեր զգացմունքներով: Դոնէ, այժմաս մեր հայեցաղութեամբ,

մեր մաքի այժմեան զարդացմանը նայած, մենք չենք կարող երեակայել, որ այդ ելքելից հնարաւոր է լինէ: Մենք կարող ենք այն աստիճանին հասնել, որ կապացուցանենք, որ ուղեղի մէջ իւրաքանչիւր նիւթական փոփոխութեանը յաջորդում է զիտակցութեան ներքին փոփոխութիւնը, ինչպէս ստեղունքի իւրաքանչիւր հարուածը որոշ առն է առաջացնում: Քանչիւր հարուածը որոշ առն է առաջացնում: Կ'ապացուցանենք, որ ուղեղը կարելի է համեմատել ստեղնաշարի հետ, որտեղ իւրաքանչիւր կէտ որոշ հոգեկան տոնի է համապատասխանում: Մենք կարող ենք նցնապէս ենթադրել, որ զիտակցութեան իւրաքանչիւր փոփոխութեանը յաջորդում է ուղեղի մի որոշ նիւթական շարժում: Բայց մենք չեն+ կարո՞ւ համականական թէ ինչպէս են այդքան մեծ քանակութեամբ սպիտակուցի, արեան և լուսակրի նիւթերը այդպէս սերտ կապուած մեր զիտակցութեան պրոցեսների հետ:

Այդպէս ուրեմն, Ճիշդ որոշելով մեր բանականութեան համար ըմբռնելի և նրա համար անըմբռնելի բաների սահմանը, մենք, վերջապէս, կատարելապէս ապահովեցնում ենք Ճշմարիտ զիտութեան շըջանը և այդ շըջանում մեր առաջ լայն հեռանկար է բացւում, երբ մենք մի թռուցիկ հայեացք ենք ձում ուղեղի ֆիզիոլոգիայի վերջին տասն տարուայ ընթացքում արած յառաջաղիմութեան վրայ: Միւս կողմից, երբ մենք ձգնում ենք ապացուցանել որ ուղեղի պրօցեսների և զիտակցութեան երեսյթների մէջ կայ մի ընդհանուր կապ և զուղընթացութիւն, մէջ կայ մի ընդհանուր կապ և զուղընթացութիւն, զալիս ենք այն պրօբլէմային, որ ուղեղի նիւթական պալիս ենք այն պրօբլէմային, որ ուղեղի նիւթական պրօցեսները ենթարկուած են ոչ միայն ֆիզիկայի

և քիմիայի օրէնքներին, այլ և նոյնպէս հետեւում
են տրամաբանութեան օրէնքներին։ Այդ պրօբլէման
իւր վեհութեան և գաղափարական ձգտութների շնոր-
հիւ արժանի է մարդկութեան ամենաազնիւ խելքե-
րի ուշագրութեանը։

B. P.
11/29
B. P.



X

1038

Հ

2013

0025261

ՀՀ Ազգային գրադարան



NL0025261

